## Տ. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջնորդ Ուկրաինայի հայոց թեմի

*Ծնվել է 1955 թ. մայիսի 9-ին, Երևանում: Նախնական կրթությունը ստացել է թիվ 114 դպրոցում: Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դաշնամուրի բաժինը:*

*1984 թ. ընդունվել է Հոգևոր ճեմարան:*

*1987 թ. ավարտել է ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ՝ «Մինուկքոս Ֆելիքսի «Օկտավիոս» երկը» թեմայով:*

*1986 թ. ձեռնադրվել է սարկավագ:*

*1988 թ., ձեռամբ Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:*

*1989 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ Հերմասի «Հովիվը» թեմայով, և ձեռամբ Անանիա եպս. Արաբաջյանի ստացել մասնավոր վարդապետության չորս աստիճանները:*

*1994 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Պետրոս Քյուրությունը և նրա «Հաւաքումն Աստուածաբանութեան» երկը» թեմայով, և ձեռամբ Ներսես արքեպս. Պոզապալյանի ստացել ծայրագույն վարդապետության աստիճան:*

*1987-88 թթ. աշխատել է որպես Վեհարանի քարտուղար, 1988-ից եղել է Վեհափառի գավազանակիրը, 1989 թ.՝ ճեմարանի փոխտեսուչը:*

*1991 թվականից՝ Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ:*

*1997 թ. հունվարից Գարեգին Ա կաթողիկոսի տնօրինությամբ՝ Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդն է:*

ՕՁՈՒՄ ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ